Ու հանկարծ տաքուկ անկողնում Հրաչյա Մանուկյանին թվաց, որ կրծքի տակ տարուբեր մուժ ու մառախուղի թե թանձրաշարժ ջրերի խորքից շնչավոր Մեկը ճգնում է վեր բարձրանալ: Եվ քանի որ ինքը որպես հիվանդ էր մտել անկողին՝ մտադիր անաշխատունակության թերթիկը երկուշաբթի ներկայացնել՝ հարգելի դարձնելով իր բացակայությունը նաև հինգշաբթի կայանալիք կուսկոմիտեի նիստից, փետուրի բարձն ուղղեց-հարմարեցրեց, շուռ եկավ կողքի, շուլալվեց տաք վերմակի մեջ ու վար բերեց կոպերը: Ի՞նչ է, ինքն իրավունք չունի՞ գոնե երեք օր հիվանդանալ, ասենք՝ հարբուխով: Մի նիստի էլ թող ներկա չլինի, աշխարհը հո չի՞ քանդվելու: «Կպահանջեն՝ ցույց կտամ, ահա թերթիկը: Հինգշաբթին, ուրբաթը, շաբաթն ու երկուշաբթին էլ ներառյալ, բայց ինչպես տեսնում եք, օրը երկուշաբթի է, և ես ներկայացել եմ աշխատանքի՝ անտեսելով իմ անձնականը...»: Անտեսելով քո անձնական «հարբուխը»՝ իր մտքերը լրացրեց այն Մեկը՝ չակերտները սեղմելով հարբուխ բառի շուրջը:

- Աստղի՛կ,- կանչեց կնոջը,- Աստղի՛կ, զգուշացրի՞ր բժշկին, որ թերթիկը բաց անի:

- Հա,- խոհանոցից լսեց նրա բարակ ձայնը,- դեռ չես քնե՞լ: Հիմա, սիրելի՜ս, մնաց մի ափսե, սա էլ լվանամ՝ կպրծնեմ:

- Թե սուրճ մնացել է՝ բե՛ր, քունս չի տանում:

Քիչ անց կինը, մատուցարանը ձեռքին, մատուցարանին երկու գավաթ սուրճ, զույգ ըմպանակ կոնյակ, շողացնելով սևորակ աչքերը, մտավ սենյակ:

- Ա՜ստղ, գնացած պիտի լինեի...,- ասաց Հրաչյան: -Թե ինձնից ինչ ցերեկով քնող:

- Սրանք հիմա ետ տանե՞մ, Հրաչյա՛,- նեղսրտեց կինը,- փոշմանեցի՞ր, որ գոնե մի լրիվ օր տանն ես մնալու:

- Մի նեղանա, Աստղիկ: Մոտ բեր: Մնացի տանն ու մի տեսակ անհանգիստ եմ:

- Ախր, զօր ու գիշեր գործարան կամ գործուղում:

- Մի ժամից նիստը կսկսվի:

- Խմիր, սուրճդ սառչում է,- կտրեց կինը:

- Իսկ կոնյակը՞,- կատակի տվեց ամուսինը:

- Էհ, շատ էի ուզում քեզ հետ «արձակուրդ» նշել, տեսնում եմ՝ տրամադրությունդ տոնական չէ:

- Տոնական չէ, տնական է,- հեգնեց-անցավ բառախաղի:

- ճի՞շտ:

- Ըհը:

- Որ տնական է՝ խմենք Արամիկիս կենացը:- ժպտաց կինը և աջը փաղաքույշ դրեց փորին, որ Արամիկի կացարանն էր:

- Ե... ե՞րբվանից,- հանկարծակիի եկավ Հրաչյան՝ չթաքցնելով ուրախությունը:

- Երկու շաբաթ է:

Աստղիկը գիտեր, որ այդ լուրից Հրաչյան պիտի ցնծար, կիսամերկ թռչկոտեր սենյակում ու գրկեր իրեն, Արամիկ գոռար այնպես, որ շենքը դղրդար, նորից գրկեր ու համբուրեր իրեն, սակայն հակվեց ու քնքուշ թևերով մարեց ամուսնու խենթության հրավառությունը:

Հրաչյան օղակեց կնոջ մեջքը, ձգեց իրեն և տոհմիկ հպարտությամբ ասաց.

- Տղայի հայր եմ լինելու:

- Բա որ աղջիկ ծնվե՞ց... Երևի հարևանիդ նման ծննդատնից տուն բերելու էլ չգաս:

- Մերը ցեղական է, բեկում չկա:

Եվ փոքր անց, որ մեղմի կնոջ գգվանքները, իրեն հաստատ

հայր պատկերացնելով՝ թավ, ազդու, հրամայական արտասանեց անդրանիկ զավակի անունը, որը դեռ ողջ-առողջ իր հոր՝ պահեստի փոխգնդապետ Արամ Մանուկյանի անձի երկրորդ նշանավորումը պիտի դառնար.- Արա՜մ, Արա՜մ... Նա արտասանեց բարձրաձայն, հայացքը՝ սենյակի դռան նեյլոնե վարագույրին, կարծես Արամն իր մանկության կերպարանքով, իր նման զինվորի պես պիտի գար, կանգներ, պատվի առներ ու ասեր. «Ի՞նչ կհրամայես, հայրի՛կ»: Այդ պահին ինքն իսկը իր Արամ հորն էր հիշեցնում: Կինը նկատեց, ու սիրտը խնդաց, որ ամուսինն առնականացման վարժություններ է անում:

Եվ կինը զգայուն էր, ասաց.

- Գնամ ճաշ պատրաստեմ: Մեկ էլ տեսար՝ մայրիկենք եկան... կարգին մի բան չունենք հյուրասիրելու:

Ամուսինը մնաց լուռ: Կոպերը փակ՝ նա տեսնում էր իր առաջնեկին, որ դռան մեջ կանգնած՝ հարցական նայում էր ուղիղ իր բիբերին: Ի՞նչ էր ուզում որդին: Եվ ինչու՞ էր տեսիլը պատանու և ո՛չ մանուկի: Ինքը տանն էր մնացել, որպեսզի հանգստանար, գուցե թե ցերեկով վայելեր կնոջ հրապույրները, կամ քներ, ընթերցեր ու կտրվեր «պարտադիր տաղտուկի հարուցիչներից», ինչպես գեղագիտության դասախոսն էր դիպուկ ասել ուսանելու տարիներին: Իսկ հիմա՞:

Խռիվ մտքերը գալիս, ծածկում, ծանրանում, և վրայից ոնց որ քաշում էին վերմակը: Նա փորձեց կրկին ուղղել բարձն ու ավելի հարմար դնել գլուխը, բայց՝ իզուր:

Հրաչյա Մանուկյանը թուլացրեց մարմինը: Կինը միս էր ծեծում: Թակո՛ցը կարճ ցատկերով խոհանոցից հասնում էր իրեն:

- Աստղի՛կ,- բղավեց նա,- ծածկի՛ր սենյակի դուռը: Հիմա էլ դու՞ փոշմանեցիր, որ մնացել եմ տանը:

«Էապես է,- երբ անդորր տիրեց, մտածեց նա:-Մարդ մի խուլ տեղ չի գտնում, որ ինքն իր հետ մնա: Լոկ ինքն ու ինքը: Չթողնե՞մ ու գնամ թափառեմ...»:

Եվ դուրս նայեց լուսամատից: Առվաջրերի նախշերը փշրելով դպրոցականները դասից տուն էին դառնում:

«Ուրեմն՝ ժամը մեկն է,- կռահեց Հրաչյան,- առաջին հերթա-

փոխի դասերն ավարտվել են: Նիստին մնաց երկու ժամ»: Ու պատկերացրեց, որ իր տեղը թափուր է: Նիստի մասնակիցները կգան, կտեսնեն իր տեղը՝ խոռոչ: «Կքննարկեն, ու ես, որ կարծիք պիտի հայտնեմ, չկամ, փախե՞լ եմ...»:

«Բայց դու թերթիկը ցույց կտաս՝ «հարբուխ»,- նորից խոսեց այն Մեկը:- Ոչ ոք չի կարող քեզ հանդիմանել բացակա լինելուդ համար: Ընդհակառակը՝ ներքուստ գոհ էլ կմնան, որ չես ներկայացել: Անառարկելի տոնով կոմիտեի քարտուղարը կասի՝ ստուգեք բացակայության պատճառն ու բացատրագիր պահանջեք: Եվ ես բոլորի դիմաց կմնամ մենակ... կմնամ մենակ... Դեհ, ես հասկանում եմ, դու չես ցանկանում վատամարդ դառնալ, նա, ով վարելու է նիստը, քեզ լավություն է արել, էդ մեկսենյականոցդ իր միջամտությամբ ես ստացել: Թե չէ՝ ու՞մ դարդն էր կտրվել, երեկվա ջահելն ես, քեզ տանտեր դարձներ... Հասկանում եմ՝ երախտամոռ չես. հեշտ չէ նրան հակառակվելը... Բայց կասեիր խոսքդ, թե չէ՝ լափն իմ գլխին կթափվի, ու ես նորից կմնամ առանց աշխատանքի...»:

Հրաչյա Մանուկյանը դիք նստեց անկողնում: Արամիկը խառնում էր մշուշ ու մառախուղ: Նրա մատները ջրերի խորքից արևերես էին հանում իր հոգում գլխատված խմբագրի կառափը, որի մկանուտ ծնոտները թեպետ հավաստում էին գլխատիրոջ կամքը, սակայն մոմե դիմակի վրա հուսահատության դալուկ շողն էլ էր բեկվում:

«Որքա՜ն ենք իրար հետ խոսել,- թրթռացին շուրթերը,- քանի՜ անգամ... Դու դեռ ջահել ես ու երևի չհմանաս, որ զուր, հենց այնպես ոչ մի արարք անհետ չի կորչում, հիսուն տարի առաջ աչքիդ առաջ որևէ մեկին հասցրած ապտակն այսօր քո այտը կայրի... Ինչե՜ր են անցել գլխովս...»:

Կառափն իր Արամիկ առաջնեկի մատների շողից պարզաջրվում էր: Եվ ինքը նկատում էր այդ դեմքի յուրաքանչյուր կնճիռը, որ, ո՞վ իմանա, ցավ ու տառապանքի ինչ սերմեր էր պահ տալիս իր ակոսում...

Խմբագրի դեմքը տխրեց, և այդ է՝ ընկղմվում էր ջրերի հատակը՝ մի բան պահեց. «Հրաչյա,- ասաց նա,- գոնե դու լավ գիտես, որ ես վախեցողը չեմ, Աստված վկա: Թեկուզ մի տասն ամիս պարապ կմնամ, պարտքերի մեջ թաղված... Ստամոքսի

մասին խոսելն էլ ավելորդ է... էդպիսի՞ օրեր եմ քաշել... Իմ սերնդի տղերքը պատերազմի տարիներին ի՞նչ էին ուտում, իմանում ե՞ս. կարտոլ ու գարեհաց: Էդ հիմա են խորտկարան-ների, ռեստորանների ճաշացանկերն անգիր արտասանում: Տխուր է, շա՛տ տխուր է: Ես որ կռվում եմ՝ լացից է: Ու դու ոնց որ ինձ հասկանում ես: Սովի, բռնեբռնեի տարիներին երեխա տղա էի և դպրոցում պատմությունից գերազանց էի ստանում: Դպրոցից գալի՛ս եմ, ուրախ- զվարթ գալիս եմ, որ հինգս ցույց տամ հորս: Հարցնում եմ՝ ու՞ր է հայրիկս: Մայրս հեկեկում է: Գիշերն էլ անցավ՝ չվերադարձավ: Հարցնում եմ՝ մա՛, հայրիկս որտե՞ղ է, ինչու՞ ես լաց լինում: Վախվորած շուրջը նայելով, թե չլինի մարդ-մուրդ լսի, հազիվ կերկերաց՝ տա՛-րա՛ն... Մեր գյուղացիներից մեկը սիբիրներից էր եկել, տեսնեիր՝ կենդանի մեռյալ: Նա էր տայգայում վերջին անգամ հանդիպել հորս և այդ լուրը մեզ հաղորդեց, երբ մերձիմա՛խ էր արդեն: Քեզ ինչու՞ եմ կենսագրությունս պատմում, հա՛, ուզում եմ մեկ էլ հիշես՝ կյանքում ո՛չ մի արարք անհետ չի կորչում, չի՛ կորչում... Ու որ կռվում եմ՝ հորս եմ հիշում, քո գերի հորեղբորն ու ֆիդայի պապիս եմ հիշում, ազնիվ, պատվական մարդկանց եմ հիշում... Ես կյանքի փորձ ունեմ ու ճանաչում եմ, չէ՞, որ էդ քո նվիրատուն հեռու չէ էն տանողներից՝ տգետ է, եսակենտրոն, ինքն իր արձանին սպասավոր, վերևներում՝ հաճոյակատար, ներքևներում՝ կեցվածքով... Դու փափագում ես ողջ աշխարհի հետ սեղան նստել, ընկերություն անել: Քո սիրտը մաքուր է, ոնց որ ես՝ ջահել տարիքում: Տա Աստված՝ էդ բախտին արժա-նանաս: Բայց հիմա դու ու՞մ ընկերն ես. ես տխուր եմ, նա՝ ուրախ, ես պարտվում եմ՝ նա հաղթում է, մենք լռում ենք՝ նա իշխում է, իմ գրպանը ծակ է՝ նրանը՝ լիքը... Բա ինչպե՞ս ես գրկելու բոլորին եղբայրաբար, հը՞...»:

Խմբագրի մինչ այդ փակ կոպերը բացվեցին:

«Հրաբուխի խառնարան, հրաբուխի խառնարան,-սարսռաց, աղաղակեց Հրաչյան,- փակեիր աչքերդ, հեռանայիր: Ինձնից, ախր, ի՞նչ ես ուզում»:

Խմբագիրը լսեց նրա աղերսանքը, ձկան ետճոճքով նորից սուզվեց իր ջրերում:

«Հենց նեղն եք ընկնում, նոր եք ինձ մտաբերում: Ընկեր ենք,

հաց ենք կիսել... Որ ձեռքդ ճար լիներ, դու էլ քո արծանը կկանգնեցնեիր աշխատասեղանիդ դիմաց, քո բնակավայրում, չպատահի, թե քեզ մոռանաս գեթ մի վայրկյանով, չլինի՞ նորագույն պատմության հատորներ գրվեն, ու քո անվանը չհանդիպես ոչ մի էջում... Ոնց էի՞ր քարտուղարին ասել՝ վատ տղա չէ, խելացի է, միայն բռնկուն է. երևի փորձն է պակասում: Ինձ էլ գալիս ասում ես՝ էսօր-էգուց դու ես լինելու իմ արժանի փոխարինողը: Ուրիշ էլ ո՞վ: Աշխատիր, շա՜տ կարդա... Քեզ մնա՝ կնոջս մոտ էլ թույլ չես տա գնամ: Մի ժանգոտ մահճակալ դնել կտաս խմբագրությունում ու կասես՝ կարդա՛, գրի՛ր, քնի՛ր, զարթնի՛ր... Ինքդ ցերեկով փախչում, կանանց հետ ժամադրության ես գնում, ինձ էլ թե՝ որ վերևներից կզանգահարեն, կասես գործկոմ են կանչել: Ես էլ էնքան միամիտն եմ՝ գործկոմն ու կանանց իրար հետ եմ շփոթում: Բա՞...»:

«Ուզում ես՝ մի արի, դու «հարբուխ ես», ես քեզ հարգելի կնշանակեմ»,- լսվեց ջրերի ձայնը:

«Հենց էլ հիվանդ չեմ. բժշկիս թուղթն օրինակա՞ն է՝ ուրեմն իրավունք ունեմ: Դու քո հարցերը կարգավորիր, ինձ ի՞նչ: Քո մասին չարախոսե՞լ եմ: Ո՛չ: Ուրիշների մոտ ավելին ներկայացրե՞լ եմ, քան իրականում կաս: Այո՛: Ասե՞լ եմ՝ անկաշառ, հետևողական մարդ է, նախկինում նա լիներ խմբագիրը, հիմա այսքան թերություն չէինք ունենա: Այո՛: Ավելին էլ ի՞նչ անեմ...»:

«Դու զուր ես չարանում ինձ վրա, Հրաչյա, զու՛ր: Էդ հեռատես քարտուղարիդ լարած որոգայթներն են: Դու էս խառնաշփոթի մեղավորն ինձ ես համարում, պարզ է: Բայց ինչո՞վ: Որ շրջակա միջավայրի մաքրության մասին տեղեկություն եմ հաղորդել վերադասին ու դիրեկտորին նկատողությո՞ւն են հայտարարել... Բա էդ կանայք, տղամարդիկ սնդիկի գոլորշի շնչելով մինչև կենսաթոշակ ո՞նց դիմանան... Քո կնոջ տարիքին աղջիկ է, դեմքին գույն չկա: Նա իր առողջությամբ պլան գերակատարի, ինչ է թե ղեկավարները դրոշ ու շքանշաններ ստանալով իրենց փառասիրությունը հագեցնեն ու քեզ էլ հավատացնեն, որ ես զրպարտիչ եմ ու կնամոլ, որ իրենցից գաղտնի գլխից մեծ-մեծ գործեր եմ բռնում... է՜, Հրաչյա, ափսո՛ս...»:

«Դա քարտուղարի որոգայթը չէ, խաբում ես, դիրեկտորինն է...»:

«Քո կարծիքով նրանք շա՞տ են տարբերվում իրարից: Մինչև այժմ էլ համոզված ես, թե դիրեկտորն ինչ քեֆն ուզեցել՝ արել է, իսկ նա... գաղափարական է, իր տիրույթներից դուրս է... Միամի՞տ... Եթե այդպես է, ասա մի տեսնեմ՝ նա ինչի՞ համար է պատասխանատու... Որ մարդիկ օրնիբուն խոնարհ բանեն՝ իրենք վերևներին ներկայանան որպես զգոն և հմուտ կազմակերպիչնե՞ր... Իսկ սնդիկի գոլորշիները թող շնչեն Շուշիկը, Պողոսը, Պետրոսը, շնչեն, որ շուտ անցնեն կենսաթոշակի: Կնոջդ տարիքին է Շուշիկը, ճանաչում ես: Գիտե՞ս ինչու չի ամուսնանում: Մի օր ասացիր՝ ամուսինը նրա ինչի՞ն է պետք, գիշերն ում ճանկը գցեց՝ նա էլ ամուսինն է: Խոսքի մեջ ծիծաղեցինք՝ անցավ-գնաց: Բայց, ո՛չ, ախպերս, էդ կյանք տեսած տղամարդու խոսք չէր, ո՛չ: Դու, եթե կնոջ բնույթը չես ըմբռնում, ուրեմն՝ բնությունն էլ, կյանքն էլ հանելուկ կմնան քեզ համար: Նրանցը սիրել-սիրվելը չէ միայն, ծնունդն է, մայրությունը... Հապա դու քո Աստղիկին ակնարկիր, թե երեխա չես ուզում, դուք առանց զավակի էլ կապրեք, և հոգսն ու չարչարանքը քիչ կլինեն, կմնաք միշտ տարված իրարով: Ախր, քեզ կատի, կրկնակի, եռակի հանցագործի տեղ կդնի: Այն աղջիկն էլ կատաղությունից է շնանում, հասկացի՛ր: Այնքան սնդիկի գոլորշի է կուլ տվել, որ պտուղը չի բռնում: Թե չէ էս տղամարդկանց երկրում զորությունը գետնի տա՞կն անցավ, չմնա՞ց մեկը, որ էդ թորշնած ծաղկին արև ու ջուր դառնար... Հիմա որ քեզ պատմում եմ, չէ՞, սիրտս կտոր-կտոր է լինում, գիտեմ, թե քույրս է թևերիս վրա հանգչում... Եվ ցավն էլ այն է, որ այս մասին բոլորը գիտեն՝ բժիշկները, դիրեկտորը, քո գաղափարաբանը, վերևներն էլ, ներքևներն էլ...Գիտեն ու լռում են: Օրը մեկ մի խոստում են տալիս, թե ահա, նոր տեխնոլոգիա ենք հնարել, շուտով կվերանա թունավոր սնդիկը... Ինչու՞... Որ իրենց չնեղեն, որ չգցեն աթոռից: Աթոռի՛ց, այո՛... Իսկ արտադրամասը պետք է փակել, էլեկտրացանցի վրա ո՞նց են լերկ գանգ ու խաչածև ոսկորներ նկարում, այդ նույն վահանակից պիտի փակցնեն, որ ոչ ոք մոտ չգա, քանի դեռ չեն թունազերծել օդը... է՛, ի՞նչ ասեմ, թատրոն է, վատ թատրոն՝ ան-

կիրթ հանդիսականներով... Ափսո՜ս, Հրաչյա՛, հազա՛ր ափսոս ջահելությունդ... Խնդրում եմ չնեղանաս, դու էլ ես էն աղջկա նման, ու հիմա ձեզ շփոթում եմ և լացել եմ ուզում»:

- Աստղի՛կ,— բղավեց Հրաչյան:

Եվ մինչ կինը կգար, դաստակով սրբեց ճակատը:

- ժամը քանի՞սն է...

- ժամացույցը պատից կախ, ինձ ե՞ս հարցնում:

- Չէ, դու՛ ասա ժամը...

Կինը կռացավ, ուշադիր զննեց Հրաչյային:

- Քեզ ի՞նչ պատահեց, նոր լավ էիր: Դեղ տա՞մ:

- Կանցնի, ոչի՜նչ, կանցնի:- Ասաց և նստած տեղից գրկեց կնոջը: Նրա երեսը դիպել էր կնոջ փորին, և կինն անհարմար-հաճելի զգացում էր ապրում: Դռան մեջ նորից երերաց իր զավակի տեսիլը. նա մանկացել էր ու ժպտում էր, ոնց որ կոնֆետ ուտելիս: Հրաչյան մեկեն բաց թողեց կնոջ իրանը, ձեռքը գցեց աթոռի թիկնակից կախ արած շորերին, տենդորեն հագնվեց և պոկվեց տնից՝ ասես աղեղը լքած նետ:

Կինը մատները դրեց շուրթերին, որ չասեր՝ մեղա՜:

Առաջին իսկ պատահած տաքսիով նա սլացավ ձեռնարկություն: Ինչքան ոտքերում ուժ կար, մուտքից ամենակարճ ճանապարհով վազեց նիստերի դահլիճ: Քարտուղարուհին խիստ ու դժգոհ կերպ ընդունեց ու, կարծես երթևեկության կանոններ էին խախտել, ավտոտեսուչի ձեռքի շարժումով պարզեց ցուցամատը՝ նիստը հինգ րոպե առաջ է սկսվել:

- Մի կո՛ղմ քաշվիր,- կոպտեց Հրաչյան ու քրտնմխած, վառվող աչքերով հայտնվեց մարդաշատ դահլիճում:

Վայրկենական լռություն տիրեց: Ինքն էր ու զարմացած դահլիճը:

- Եկա՞ք, Մանուկյան: Իսկ ինձ ասացին՝ դուք հիվանդ եք,- ներկաների առջև իր քաջատեղյակությունը շեշտեց և շատերին հասկանալի երանգով Հրաչյային դիմեց քարտուղարը:

- Ես հիվանդ չեմ:- Զուսպ պատասխանեց Հրաչյան:

- Այդ դեպքում ինչու՞ եք ուշանում նիստից, ձեզ զգուշացրել են մի քանի օր առաջ,- ազդեցիկ- հանդիմանական նետեց քարտուղարը:

- Ո՛չ, ես չեմ ուշացել, եկել եմ ճի՛շտ ժամանակին:

Եվ առաջ անցնելով՝ նստեց խմբագրի կողքին:

Հրաչյան տուն հասավ կարծես ամպերի վրայով: .Նրան թվաց, թե առվակները քչքչում են, ծառերի սաղարթներում ծլվլում են ցրտահար ճնճղուկները, իսկ ձմեռնավերջի արևը մոտեցել է քաղաքին:

Փոխգնդապետ Արամ Մանուկյանը դանդաղ քայլքով չափչփում էր սենյակը: Մայրն ու կինը փսփսում էին խոհանոցում: Երբ նա սեղմեց դռան զանգի կոճակը, երեքն էլ միաձգամից ելան դուռը բացելու:

Հայրը քննախույզ նայեց ժպտացող որդուն, հարսին և ասաց.

- Հարցազրույց վարելուց է գալիս, նման է...

- Հայրի՛կ, մի փոքր տարբերությամբ, այսօր ի՛նձ էին հարցնում՝ ե՛ս էի պատասխանում, պետի՛ս էին հարցնում՝ ե՛ս էի պատասխանում, մյուսի՛ն էին հարցնում՝ ե՛ս էի պատասխանում: Ե՛ս էի, ե՛ս էի, ե՛ս էի: Բարև,- և առնաբար սեղմեց հոր աջը: